28/8/19 թ.

No 28/8- 692

«ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն Վ. Գևոնգյանին

Հարգելի պարոն Գևորգյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի հետ **ս.թ. ապրիլի 23-ին** կնքել է պետական գնման «ՀՀ Վայոց Ձոր «Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքի» թիվ **ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47** ծածկագրով պայմանագիրը:

ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել **2019թ. նոյեմբերի 09-ը**:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

- ս.թ. օգոստոսի 23-ին Կապալառուին նամակով նախազգուշացվել է իրականացվող աշխատանքների անբավարար ընթացքի և որակի մասին,
- մինչև օրս իրականացվել է նախատեսված շինարարական աշխատանքների ընդամենը 18 տոկոսը, որի համար Կապալառուին 08.07.19թ. վճարվել է **4, 290,323** դրամ, ինչպես նաև այն, որ
- **ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47** պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կատարվում են այնքան դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, և

հիմք ընդունելով ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագրի 3.1 կետի 3.1.4 (ա) ենթակետի և 6.3 կետի դրույթները կայացվել է որոշում՝

1. Լուծել **23.04.2019թ.** կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ **ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47** պայմանագիրը.
2. Սահմանել պայմանագրով նախատեսված տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ 24,720,420 ՀՀ դրամի 0.5 տոկոսի չափով, որը կազմում է՝ **123,602** ՀՀ դրամ.
3. Տուգանքի գումարը կհաշվանցվի թիվ 1 կատարողական ակտից պահված 225,806 դրամ երաշխիքային գումարից:

Սույնով, տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, թիվ **ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/47** պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏՋՀ-ն մտադիր է պահանջ ներկայացնել «Ամերիա բանկ» ՓԲԸ-ի՝ 2,472,042 ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

Գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյան